խիբ ի վերայ գլխոյն։ Եւ զամենայն, զոր ինչ եւ կամէր՝ առնէր չարիս Հայոց· եւ ոչ ոք իշխէր ասել բան ինչ կամ զրոյց, զի առաւել եղեւ սա հակառակ Հայոց քան զՊօղ էրէցն եւ զուրացողն Վասակ։ Եւ այս ամենայն վասն ծովացեալ մեղաց իմոց· վա՜յ ինձ։

Եւ յետ այսր ամենայնի յաւել զչարն ի վերայ չարի եւ ած խորհուրդ ի մտի· զի չասայր զէ· խորհուրդն եկեղեցոյ կատարել, իբրեւ զարձան Հայք իւրմէ եւ չզնային յեկեղեցիքն եւ ոչ զկնի նորա, բայց միայն իւր ազգականքն եւ ընտանիքն։ Զտայր մեռեալս թաղել եւ զերախայս կնքել, կամ պսակ տալ կամ հաղորդ· այլ ծածուկ յայլ քաղաքաց բերէին քահանայս կամ զմեռեալս ուղարկէին այլ տեղ, եւ զայն եւս ահիւ եւ դողութեամբ։ Որ եւ զայն եւս իմացեալ՝ եղ <պահապանս> ի դրունս քաղաքին, զի մի տարցեն այլ տեղ զհիւանդս կամ զմեռեալս, կամ մի զոք բերցեն։ Եւ օր մի գտեալ էրէց մի ի քաղաքն, որ եկեալ էր առ հիւանդսն, կոխեցին զտունն, կալան զէրէցն եւ տանէին ընդ մէջ քաղաքին բոկ ոտամբ եւ գլխիբաց իբրեւ զմահապարտ· եւ իբրեւ տարան, ածին զնայ առաջի նորա, ընդ որս էի եւ ես եղկելիս, զոր յետ բազում զանից եւ զզվանաց եւ ի չղթայս եւ ի կապանս եւ արկ[8] ի բանտ, մինչեւ տօլվաթաւորքն հազիւ կարացին թափել ի ձեռաց նորա։ Եւ մեք այսպէս լքեալ եւ թողեալ

[8] յարկ։